

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՋՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ
ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ,
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ցանկացած լեզու ուսումնասիրելու և միջլեզվական հաղորդակցություն սահմանելու համար առաջնահերթ կարևորությունը տրվում է քերականությանը՝ ճիշտ և գրագետ խոսելու համար, ընդ որում, խոսքի կազմության հարցում կարևորագույն դերը պատկանում է *բային*, քանի որ առանց բայերի սովորաբար նախադասություններ չեն կազմվում (նկատի չեն առնվում անդեմ նախադասությունները): Անհնար է ուսումնասիրել բայն առանց անդրադառնալու եղանակի քերականական կարգին, որը համարվում է բայի ամենաբարդ կարգերից մեկը: Եղանակի քերականական կարգն արտահայտում է գործողության հարաբերությունը իրականությանը և ունի իրական, դրդողական, ենթադրական, ցանկալիության և անհրաժեշտականության իմաստներ (հւլդաթյան 2010: Բ, 167): Այլ կերպ ասած՝ եղանակի քերականական կարգն արտահայտում է գործողության և իրականության միջև հարաբերությունը խոսողի տեսանկյունից (Ազիզյան 2006: 4): Հետևաբար, խոսողի վերաբերմունքը կարող է արտահայտվել տարբեր միջոցներով, և նրա մտադրությունը լավ հասկանալու համար հարկավոր է ուսումնասիրել եղանակի կարգը:

Իտալերենում, հայերենում և անգլերենում երկրորդական նախադասություններում ըղծական եղանակի գործածության համեմատական-համադրական վերլուծության արդյունքում կարելի է ներկայացնել հետևյալ դեպքերն ըղծական եղանակի գործածությամբ:

1. թե իտալերենում, թե հայերենում և թե անգլերենում գործածվում է ըղծական եղանակը *խնդիր* երկրորդական նախադասություններում.

ա) մի շարք բայերից հետո, որոնք արտահայտում են *հրաման*, *երաշխավորում*, *խորհուրդ*, *առաջարկ*, *վախ*, *պահանջ*, *արգելք*, *դրդում*, *խնդրանք*, *համաձայնեցում* / *անհամաձայնեցում*, *մաղթանք*, *կասկած* և այլն, որոնք կարող են դասվել, ընդհանուր առմամբ, *անձնականություն* ("soggettività") իմաստաբանական տարրի մեջ, օրինակ՝

(1) *...ma ho paura che le nuove generazioni non abbiano quelle qualità che di solito vengono attribuite alle persone di buon senso...* (Petrucci 2004: 87),

(2) "My "faculty" such as it is, inclines me to **advise that** we **withdraw** all our funds from the centre..." (BNC: Malcolm Macdonald, The rich are with you always London, 1978, pp. 187-304),

(3) ...**ես խնդրում եմ, որ ընթրիքդ վայելես**, այդ ինձ ավելի կուրախացնե, քան թե 'գուգություններից' առաջացող բարիքները... (EANC: Մուրացան 1896),

բ) մի շարք ածականներից հետո, որոնք կիրառվում են *համարել/think* բայերի հետ. ինչպես օր.՝ *քնական, տարօրինակ, անհնար... համարել*.

(4) "**I think it possible that you move it,**" she said at last. "but it will let the burning out " (BNC: Storm Constantine, Hermitech, 1991),

(5) **Եվ ահա թե ինչու ես աներաժեշտ եմ համարում, որ դու այս զիշեր ներք հեռանաս** (EANC: Նար-Դոս, Մեր թաղը):

Հարկ է նշել, որ հայերենում *զղջալ, ավստասլ, ցավալ, գարմանալ, զոհ լինել* բայերից հետո չի գործածվում ըղծական եղանակը, մինչդեռ իտալերենում և անգլերենում նման կիրառություն գոյություն ունի, ինչպես օրինակ՝

(6) *Mi dispiace che non venga anche lei con noi...* (Petrucci 2004: 25),

(7) *I am pleased that your visit seem to have done her so much good* (BNC: Sandra Matron, Surrey Richmond, Roman spring, 1993),

(8) - **Իսկ ես այլևս չեմ ուզում խոսել և շատ զղջում եմ. որ սիրտս բաց արի քո առաջ** (EANC: Նար-Դոս, Պայքար, 1887),

դ) *ցանկություն, իդծ* արտահայտող բայերից հետո (*ցանկանալ, ուզենալ, երագել...*), օր.՝

(9) *...desiderò che la barca sprofondasse e gli sparisse dagli occhi quello spettacolo crudele* (Pirandello 1990: 85),

(10) *Այս երանի չըծնվեի, Չըլսեի, Չըտեսնեի – Չըմեռնեի* . (Բաաիակյան 1973: 345),

սակայն *հուսալ* բայը չի գործածվում ըղծական եղանակով ոչ հայերենում, ոչ էլ անգլերենում.

(11) *I reckon Marie will be pretty surprised when she wakes up. I hope it makes (սաահաանակահ) her feel better* (BNC: Nigel Watts, Billy Bayswater, 1990),

(12) **Հուսով եմ, որ այդ էլ բավական կլինի (ենթադրական), որ դու ներես ինձ և չհիշես մեր անցյալը...** (EANC: Բաֆֆի, Խաչագողի հիշատակաբանը, 1869-1870),

2. Ենթակա երկրորդական նախադասություններում.

ա) *անհրաժեշտություն, կարևորություն* արտահայտող ածականներից հետո, օր.

(13) *Jeri ero ancora giovane. È giusto che ora, da vecchio, li conosca* (Pirandello 1990:787),

(14) *It is desirable that we have this talk, and continue in close touch afterwards* (BNC: Ellis Peters, City of gold and shadows, 1989, pp. 1-125),

(15) - Հատուկ պահանջներ չկան, արքա՛, բայց **ցանկալի է, որ մեր զորաց թիվն ավելանա** և զինվորն **ունենա** վայելուչ հանդերձանք (EANC: Զորյան, Վարազդատ),

բ) անդեմ բայերից հետո, թեև *թվալ*, *պատահել* բայերի հետ չի գործածվում ըղծական եղանակը հայերենում և անգլերենում (բացառությամբ եթե առկա է *կարծես* եղանակավորող բառը)։

(16) ...բայց *հենց նայում եմ քեզ, գլխի եմ ընկնում, որ դու ինձ ավելի ես սիրում ու դրանից ինձ էնքան երջանիկ եմ գգում կարծես* երազի մեջ *լինեմ* (Սարգսյան 1988: 132),

գ) անդեմ կառույցներում՝ ներկայացված *սլ* (կրավորական *սլ*) մասնիկով, որի դեպքում չի գործածվում ըղծական եղանակը ոչ հայերենում և ոչ էլ անգլերենում.

(17) *It is said that nothing so concentrates (ե՛նժՄԻԴԻՄ) a man's mind as the knowledge that he is to be hanged in the morning* (BNC: M. Lewes Kilby, Man at the sharp end, 1991),

(18) *Ասում են, որ մենք՝ տղամարդիկըս Անչպի նման ենք (սահմանական) երեխաների, Միայն թե, իբրբ, մենք այդ չզիտենք* (EANC: Սևակ, Բանաստեղծություններ),

3. զիջման երկրորդական նախադասություններում (*չնայած, նույնիսկ եթե, եթե անգամ, թեկուզ և՛* արտահայտող զիջողականություն), ինչպես նաև *ով էլ որ, ինչ էլ որ, երբ էլ որ, որտեղ էլ որ, ինչպես էլ որ* կառույցներում։ Հայերենում *չնայած* բառը չի գործածվում ըղծական եղանակով.

(19) *Չնայած որ կեսգիշեր է, բայց տների լուսամուտներում վառվում են լույսերը* (EANC: Մահարի, Այրվող այգեստաններ),

(20) *Ահա ինչ, Հերսիլե, ինչ էլ որ վճռես անելու, իմացիր, որ իմ համակրությունը միշտ քո կողմն է...* (EANC: Շիրվանզադե, Ունե՛ր իրավունք, 1903),

4. համեմատության երկրորդական նախադասություններում անգլերենում գործածվում են *be. look. feel. seem. sound + as if / as though + ըղծական*, ինչպես նաև ձևի պարագայում հանդես եկող *do, speak* և այլ բայերի հետ.

(21) *His eyes were fixed on her with such intensity that she felt as if that dark brown gaze were burning her skin* (BNC: Joanna Mansell, Surrey Richmond, Forgotten fire 1992).

5. հարաբերական երկրորդական նախադասություններում, ինչպես նաև *'it is/was high/about time smb did smth'* (ժամանակն է/էր, որ ինչ-որ մեկը մի բան աներ) կառույցում.

(22) *We talked about a single voice From oppressed spaces That could bring down thunder on corrupt lands* (BNC: a Serpent's Tail compilation, 1990) (անգլերենում, ինչպես և իտալերենում գործածվում է ըղծական եղանակը).

(23) *Հերետիկոս է նա, ով ունի սեփական կարծիք և առաջնորդվում է իր մտքերով ու զգացումներով* (EANC: Զեյթունցյան, Պատմվածքներ) (հայերենում գործածվում է սահմանական եղանակը).

(24) *Այա և, տեր դուքս, ժամանակն է, որ խառնեք, կայսեր պատվերի համաձայն, մեր էկեղեցիների և լեզուների միացման մասին...* (EANC: Զորյան, Վարազդատ),

6. անուղղակի հարցական երկրորդական նախադասություններում (հայերենում չի գործածվում ըղծական եղանակը).

(25) *...uncertain whether it were worth going into debt to improve the ground...* (BNC: David Craig, King Cameron, 1991, pp. 15-113) (ըղծական),

(26) *Ջգուն է արդոք մի բան, գուշակու մ է, թե ինչ է կատարվում իմ սրտի խորքում:* (EANC: Շիրվանզադե, Իշխանուհի, 1891),

7. պայմանի երկրորդական նախադասություններում, ինչպես նաև *in case, unless, on condition (that), provided (that), providing (that), if, only if, supposing (that), suppose (that), եթե, այն դեպքում եթե, գուցե (հանկարծ)* (in case), *մինչև որ չ...*, *որ շաղկապների և եղանակավորող բառերի հետ.*

(27) *...եթե ինձ ասեին, թե հանկարծ գալլ է դարձել, աղավնին՝ օձ, հրեշտակը՝ սատանա, եթե ինձ ասեին, թե երկինքը պիտի փռվ գա..., կհավատայի...* (EANC: Նար-Դոս, Պայքար, 1887),

ինչպես նաև, բացառական (բացառությամբ եթե /այն դեպքում եթե); ժամանակի (նախքան, մինչև որ չ...); հետևանքի (այնպես, որ); նպատակի (որ, որպեսզի

/չ/..., այն նպատակով, որ); ժխտական պատճառի (այն չէ, որ) և սահմանափակման (օր.՝ ինչքան գիտեմ) երկրորդական նախադասություններում: Վերջին երկու դեպքում անգլերենում և հայերենում չի կիրառվում ըղձական եղանակը.

(28) Հարցն այն չէ, որ նա **հերքեց** առարկությունները... (EANC: Ռուբեն Զարյան, Հուշապատում, մաս 1) (սահմանական),

(29) **Ինչքան գիտեմ**, Թիֆլիսից այն կողմ չես անցել (EANC: Մահարի, Հուշագրություն) (սահմանական):

Փաստորեն, երկրորդական նախադասություններում կարելի է առանձնացնել ըղձականի կիրառության երեք հիմնական խումբ՝ բացարձակ նույնականացման, մասնակի նույնականացման և համապատասխանը չունեցող դեպքեր:

Բացարձակ նույնականացում

1) անհրաժեշտության, կարևորության նշանակությամբ կիրառվող

ա) ենթակա երկրորդական նախադասություններում *è necessario/importante che; it is necessary/important that; անհրաժեշտ է/կարևոր է, որ + ըղձական եղանակ,*

բ) ստորոգելի երկրորդական նախադասություններում *l'importanza è (quella) che; the importance is that; կարևորն այն է, որ + ըղձական եղանակ,*

գ) խնդիր երկրորդական նախադասություններում *consigliare che; urge/advise that; խորհուրդ տալ, որ + ըղձական եղանակ,*

2) կասկածի, ոչ համոզվածության, հնարավորության, զարմանքի, ամոթի, ցանկության... նշանակությամբ կիրառվող

ա) ենթակա երկրորդական նախադասություններում *è possibile che; it is possible that; հնարավոր է, որ + ըղձական եղանակ,*

բ) խնդիր երկրորդական նախադասություններում՝ արտահայտող *ցանկություն, իղձ volere/desiderare / wish/would rather / ուզենալ/ցանկանալ, որ + ըղձական եղանակ,*

3) ենթակա երկրորդական նախադասություններում հետևյալ արտահայտություններից հետո *è l'ora che; it is high/about time; ժամանակն է, որ + ըղձական եղանակ,*

4) խնդիր երկրորդական նախադասություններում՝ գործածվող իբրև խնդիր ստորոգելիական կառույցի գոյականական մաս և արտահայտող *հնարավորության, կասկածի նշանակությունները pensare possibile che; think it possible that; հնարավոր համարել, որ + ըղձական եղանակ,*

5) ստորոգելի երկրորդական նախադասություններում վախ արտահայտող կառույցներից հետո *il timore / la preoccupazione / l'ansia è che; the fear / worry / anxiety is that; վախը / անհանգստությունն այն է, որ + ըղծական եղանակ,*

6) որոշիչ երկրորդական նախադասություններում այնպիսի գոյականներից հետո, ինչպիսիք են *հրաման, որոշում, պահանջ...* *l'ordine / la risoluzione / la richiesta / la proposta che; the order / resolution / demand / suggestion that; հրամանը / որոշումը / պահանջը / խնդրանքը / առաջարկը որ + ըղծական եղանակ,*

7) վախ արտահայտող նպատակի երկրորդական նախադասություններում *avere paura / preoccuparsi che; fear / worry / be afraid lest/that; վախենալ / անհանգստանալ որ + ըղծական եղանակ,*

8) նպատակի մակբայական երկրորդական նախադասություններում՝ ներկայացված *che/perché / lest / որ/որպեսզի* շաղկապների միջոցով + ըղծական եղանակ,

9) համեմատության երկրորդական նախադասություններում՝ ներկայացված *come se/quasi che; as if/as though; կարծես (թե)/ասես* եղանակավորող բառերով + ըղծական եղանակ,

10) պայման, խնդրանք արտահայտող հարաբերական երկրորդական նախադասություններում կամ էլ՝ սահմանափակման արժեք ունեցող (*tutti coloro che / those who / նա, ով/բոլոր նրանք, ովքեր*) + ըղծական եղանակ,

11) պայմանի երկրորդական նախադասություններում՝ ներկայացված *qualora, purché, a patto che, a condizione che, nel caso che, casomai; in case, unless, on condition (that), provided (that), providing (that), if, only if, supposing (that), suppose (that), եթե, այն դեպքում եթե, գուցե (հանկարծ) (in case), մինչև որ չ... որ* շաղկապների և եղանակավորող բառերով՝ արտահայտելու պայման, հնարավորություն, նպատակ, գգուշացում + ըղծական եղանակ,

12) *հետևանքի* երկրորդական նախադասություններում՝ ներկայացված *in modo che, in modo tale che, cosicché, in maniera tale che, tanto ... che, così ... che; the way that; այնպես, որ* եղանակավորող բառերով + ըղծական եղանակ,

13) *պայմանական եղանակից* կախում ունեցող երկրորդական նախադասություններում (*would rather / it would be better; կնախընտրեի / լավ կլինեք, որ*) + ըղծական եղանակ,

14) շրջուն շարադասությամբ երկրորդական նախադասություններում գործաբանական արժեքով (*Che + soggetto + congiuntivo, ...; If + smb. + did smth.; եթե*) + ըղծական եղանակ:

Հիսմանկի նույնականացում

1) նպատակի երկրորդական նախադասություններում գոհունակություն, ակստսանք, զարմանք արտահայտող բայերից հետո (*essere contento / dispiacere / sorprendersi che; be astonished / pleased / sorry that; գոհ լինել/զարմանալ/ցավալ, որ*) + սահմանական, ենթադրական, հարկադրական,

2) զիջման երկրորդական նախադասություններում

ա) *nonostante/anche se / though/even if / չնայած/նույնիսկ եթե*՝

բ) *chiunque/qualunque / whoever/whatever / ով էլ որ/ինչ էլ որ* + ըղծական եղանակ:
Չնայած և *though* բառերի հետ չի գործածվում ըղծական եղանակը,

3) անուղղակի հարցական երկրորդական նախադասություններում *dove, quando, come, come mai, perché, se, che cosa, chi, quanto (agg.), quale (agg.); if o whether* արտահայտություններից հետո: Հայերենում գործածվում է սահմանական եղանակը,

4) բացառման երկրորդական նախադասություններում *senza che, che ... non, tranne che, eccetto che, a meno che, ecc.; բացառությամբ եթե* արտահայտություններից հետո: Անգլերենում գործածվում է սահմանական եղանակը,

5) ժամանակի երկրորդական նախադասություններում *prima che, finché non, anziché, ecc.; նախքան* արտահայտություններից հետո: Անգլերենում չի գործածվում ըղծական եղանակը:

Համապատասխանող յունեցող դեպքեր

- 1) *hope / հույս ունենալ* բայերով կազմված կառույցները անգլերենում և հայերենում,
- 2) իրական փաստեր մատնանշող կառույցները (օր.՝ *understand / հասկանալ*) անգլերենում և հայերենում,
- 3) անդեմ մասնիկ *said* (կրավորական վ) արտահայտված կառույցները (*it is said / ասում են*) անգլերենում և հայերենում,
- 4) ժխտական պատճառի նախադասություններում *հարցն այն չէ, որ* արտահայտությամբ անգլերենում և հայերենում,
- 5) *ինչքան որ գիտեմ...* արտահայտությամբ սահմանափակման կառույցներում անգլերենում և հայերենում:

Փաստորեն, հայերենի և անգլերենի երկրորդական նախադասություններում ըղծական եղանակի գործածության դեպքերն ավելի քիչ են, քան իտալերենում:

Եվ այսպես, նույնականացնել շարահյուսական եղանակը գործառնականի հետ կնշանակեր ավելի ոյուրին դարձնել խնդիրը, ուստի հարկավոր է տարբերակել մեկը մյուսից՝ գործառնական եղանակն ավելի բարձր դասելով, քանի որ այն ներառում է թե՛ ասույթի հաղորդակցական գործառնության մշումը և թե՛ այլ եղանակային նշանակությունները: Իտալերենում, անգլերենում և հայերենում բայի բոլոր եղանակներն էլ բազմագործառնական են, քանի որ մի կողմից ներկայացնում են մի քանի շարահյուսական եղանակներ, մյուս կողմից իրականացնում են թե՛ խոսողի հաղորդակցական մտադրության ցուցչի գործառնությոը և թե՛ եղանակային նշանակությունների ցուցչի գործառնությոը դեոնտիկ և պարտադիր (էպիստեմիկ) եղանակավորումների շրջանակներում: Ըղծական եղանակը շատ ավելի բազմագործառնական է, քան այլ եղանակները, քանի որ իրականացնում է մի շարք շարահյուսական եղանակների գործառնությոը և դեոնտիկ եղանակավորման շրջանակներում մատնանաշում է գործողությունն իբրև պարտադիր, թույլատրելի կամ ոչ նախընտրելի: Հրամայականի նման գուգակցվում է դեոնտիկ անհրաժեշտության և հնարավորության եղանակային կարգերի հետ այնտեղ, որտեղ ծառայում է իբրև որդող կամ թույլատրելի: Այդ իսկ նշանակությունների շնորհիվ էլ ըղծական եղանակը մոտենում է հրամայականին: Պարտադիր (էպիստեմիկ) եղանակավորման շրջանակներում գործառնական որոշակի նմանություն գոյություն ունի ըղծական և պայմանական եղանակների միջև:

Գրականություն

1. Antinucci P., Cinque G., Sull'ordine delle parole in italiano: l'emarginazione. "Studi di grammatica italiana", Firenze, 1977
2. Azizyan S.A., Mood, Noyan Tapan, Yerevan, 2006
3. Baker M., *Lexical Categories: Verbs, Nouns and Adjectives*. Cambridge University Press, 2005
4. Bybee J.L., Fleischman S., Modality in Grammar and Discourse. Benjamins, Amsterdam, 1995
5. Dardano M. e Trifone P., La nuova grammatica della lingua italiana, Zanichelli, Bologna, 1997
6. Huddleston, R., Introduction to the Grammar of English. Cambridge University Press, Cambridge, 1984
7. Moretti G.B., L'italiano come seconda lingua, Guerra Edizione, Perugia, 1994
8. Renzi L., Salvi G., Cardinaletti A. (a cura di), Grande grammatica italiana di consultazione, vol. III, Mulino, Milano, 1991
9. Serianni L., Italiano, Garzanti, Torino, 1997
10. Serianni L., Grammatica italiana, UTET Libreria Srl, Torino, 2006
11. Silvestrini M., Claudio B., Chiacchella E., Armanni V.G., Pavese R., L'italiano e l'Italia, Guerra Edizione, Perugia, 1995
12. Simone R., Fondamenti di linguistica, Laterza, Roma, 1996
13. Trifone P., Grammatica italiana di base, Zanichelli, Palermo, 2000

14. Արբախյան Ա., Բայր ժամանակակից հայերենում, գիրք 1, Ե., 1962
15. Արբախյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969
16. Աղայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, դասագիրք, Ե., 1997
17. Անտոյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971
18. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե. 2005
19. Խղիվարյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2010
20. Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները ժամանակակից հայերենում, Ե., 1959
21. Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոչարյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Ա պրակ, Ե., 1980

Գեղարվեստական գրականություն

1. Calvino I., "Il sentiero dei nidi di ragno", Arnoldo Mondadori editore S.p.A., Milano, 1993
2. Eco U., "Il nome della rosa", Tascabili Bompiani edizione, Milano, 2007
3. MacLean A., "Santorini", Harper Collins Publishers Ltd. London, 1986
4. Petrucci F., "Uova di luce", I edizione, peQuod, Ancona, 2004
5. Pirandello L., "Novelle per un anno", Arnoldo Mondadori editore S.p.A., Milano, 1990
6. Romano L., "La Villeggiante", Giulio Einaudi editore S.p.A., Torino, 1975
7. Taylor A., "The raven on the water", Fontana Press, London, 1992
8. Խսահակյան Ա., "Երկերի ժողովածու", հ. 1, "Հայաստան" հրատ., Ե., 1973
9. Մարոյան Վ., "Վեստի Ջեքսոնի արկածները" և պատմվածքներ, հ. 3, "Սովետ. գրող" հրատ., Ե., 1988
10. Երևյան Վ., "Բանաստեղծություններ. լիակատար ժողովածու", "Սովետ. գրող" հրատ., Ե., 1985
11. <http://corpus.byu.edu/bnc/> (British National Corpus)
12. <http://www.eanc.net/EANC/search/> (Արևելահայերենի ազգային կորպուս)

Annotation

The article touches upon the semantic-functional characteristics of the subjunctive mood in subordinate clauses in Italian, Armenian and English within the limits of the synchronic approach (although in some cases they are described from the point of view of the diachronic approach as well). The comparative-contrastive analysis is given on the basis of the lexical-grammatical and semantic-functional characteristics of the subjunctive mood in Italian, taken as a source-language. As a result, by putting forward the similarities as well as the differences among the three languages, we have divided the usage of the subjunctive in subordinate clauses into 3 groups: **absolute similarity**, **partial similarity** and **cases with no correspondence**, and come to the conclusion that the cases of the usage of the subjunctive mood in subordinate clauses are less in Armenian and English than in Italian.